ՈՐՈՇ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԵՖՅԱՆ ԻՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ԱՆԱՀԻՏ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

1501 թվականին Իսմայիլ Ի-ինը, պարտության մատնելով ակ-կոյունլուների սուլթան Ալվանդին, գրավում է Թավրիզը և իրեն հռչակում նորաստեղծ Սեֆյան Իրանի շահ[1]:

Սեֆյան Իրանի վարչական և գործադիր կառույցները շատ արդյունավետ էին աշխատում: Այս ժամանակաշրջանում գոյություն ունեին արքունական բանիմացների խորհուրդ, արքունական վեզիրներ, դատարանների ղեկավարներ և մի շարք այլ պաշտոնյաներ: Սեֆյան Իրանի թե' վարչական, թե' սոցիալական համակարգերը ձևավորվել են՝ հիմնվելով գոյություն ունեցող վարչակառավարման համակարգի վրա, միաժամանակ նոր շունչ հաղորդելով առկա պաշտոններին, ինչպես նաև վերափոխելով և ստեղծելով նորերը: Այժմ առանձին-առանձին անդրադարձ կատարենք առկա թե՛ պետության գլխավոր պաշտոններին, թե՛ երկրում առկա ամենահասարակ պաշտոններին:

Պետության գլխավոր պաշտոններն էին՝ *վազիրե ազամ* (գլխավոր վեզիր), *ղուրչի բաշի*, *ղուլլար աղասի, իշիք աղասի բաշի, թուֆանգչի աղասի, դիվան բեգի, մաջլես նեվիսին*, որոնք միասին համարվում էին խորհրդական էմիրներ: Շահ Սուլթան Հուսեինի (1694-1722թթ.) կառավարման տարիներին խորհրդական էմիրների շարքում էին դասվում նաև մոսթուֆի ալ մամալեքը, էմիր շեքար բաշին և սեփահսալարը:

Գլխավոր վեզիրի՝ Վազիրե ազամի պաշտոնը

Վազիրե ազամը համարվում է յոթ գլխավոր խորհրդականներից մեկը: Շահ Աբասի (1587-1629թթ.) օրոք պաշտոնը վերանվանվում է Էթեմատ ադդուլե՝ պահպանելով պաշտոնի հիմնական ֆունկցիաները և արտոնությունները[2]: Վազիրե ազամը երկրի ֆինանսական հարցերի պատասխանատուն էր:

---

[1] История Ирана с древнейших времен до конца XVIII века, Ленинград: Изд. Ленинградского Университета, 1958, с. 253, **Макарян С.А.** История Ирана в средние века, Курс лекций С.А Макарян, Ростов-на-Дону: изд. “Книга”, 2010, с. 242.

[2] Matthee Rudi, The career of Mohammad Beg. Grand Vizier of Shah Abbas II (1642-1666), Islamic Studies-Osford: Oxford press 1991, N 24, 84-86.

Բոլոր պաշտոնների նշանակումները նրա համաձայնությամբ և ստորագրությամբ էին իրականացվում: Նա ֆինանսների նախարարի պարտականությունն էր կատարում: Նրա միջոցով էին հսկվում երկրի հարկերը, տուրքերը և եկամուտները[3]:

Վազիրե ազամի անմիջական հսկողության ներքո աշխատում էր **Ալիջահ մոսթուֆի ալ մամալեք**-ը[4]: Նա համարվում էր հարկային նախարար, հարկերի հավաքման և հաշվառման պատասխանատուն էր, հաշվապահական վերահսկիչի աշխատանք էր կատարում: Նա էր կազմում երկրի բյուջեն: Նրա ենթակայության ներքո աշխատում էին հինգ անձ, որոնք զբաղվում էին թիուլներից հավաքված եկամուտների հաշվառումով, ինչպես նաև ստուգում էին սիուրղալների և նրանց հարկերից ազատման հիմքը: Մոսթուֆի ալ մամալեքի հսկողության ներքո աշխատում էին **Ավարջե նեվիս**[5] -ները, նրանք հաշվառման տետրերի մեջ նշում էին արքունիքին վճարված հարկերի և տուրքերի քանակը և այն ամենը, ինչ վերաբերում էր հողատարածքներին և նրանցից գանձվող գումարներին, ինչպես նաև նրանց միջոցով կատարված տուրքերի վճարներին: Ավարջե նեվիսի միջոցով էին հավաքվում հաքիմների կողմից վճարվող տուրքերը, սա նշանակում է, որ նրանք հարկային պաշտոնյաներ են եղել, նրանց աշխատանքը համարվում էր շատ կարևոր: **Վազիրե դարուլ-սալաթնե էսֆահան**-ի պարտականությունն էր բոլոր խասե տարածքների խանություններին վերահասություն տալ, շրջան առ շրջան գանձել եկամտահարկերը, նաև անհրաժեշտ օժանդակություն ցուցաբերել հողագործության համար վարձակալության տրված տարածքների հողագործներին, հոգալ, որ գյուղացուն ժամանակին սերմացու հասցնեն, ինչպես նաև հետևել, որ հողատարածքներն առանց ցանելու չմնային: Նա նաև Սպահանի մոսթուֆիի, ինչպես նաև սահեբջամե բոյութաթի (արքունական արհեստանոցների) աշխատանքները տարին մեկ ստուգելու պարտականություն ուներ: Նա իր աշխա-

---

[3] **Макарян С.А.** Там же с. 137, **Minorsky V**. Tadkhirat al-Muluk, A Manual of Sefavid Administration, London 1943, pp. 41-42

[4] **Astarabadi Sayyed b. Morteza Hoseini,** Az Sheikh Safi ta Shah Safi, Tehran: Ed. “E. Eshraqi” 1364/1985 (պարսկերեն), pp. 91-92, Montazer-Sahab Alamara-ye Shah Esmail, Tehran: Ed: “Asghar” 1349/1970 (պարսկերեն), էջ 111-113

[5] Ավարեջե հին տերմին է, արաբական աղբյուրներում ավարեջե նշանակում է այն տետրը, որի մեջ եկամուտները և ծախսերն էին պահպանվում, պարսկական աղբյուրներում ևս ավար, ավարե և ավարջե են կոչում այն հաշվապահական տետրերը, որոնց մեջ պահվել են եկամուտները և ծախսերը: Ավարջե նեվիսները եղել են ըստ զորքերի՝ Իրաքի, Ատրպատականի, Ֆարսի և Խորասանի համար և մեկն էլ հանքերի համար:

տանքի համար պատասխանատու էր ալիջահ մոսթուֆի խասեին, իսկ ներկայացված հաշիվները վերանայվում էին վաքիլների կողմից, որոնք վերջնական վավերացում էին ստանում վազիրե ազամի հաստատումից հետո:

Մողարաբ ալիազրաթալիե նազերե դարուղե դաֆթարխանե-ի պաշտոնը ևս ենթարկվում էր վազիրե Ազամին: Նա դաֆթարխանե հոմայունի ղեկավարն էր, պահում և նշում էր այն գումարների հաշիվները, որոնք ծախսվում էին վազիր Ազամի կողմից: Նա մյուս նազերների աշխատանքների ստուգման պատասխանատուն էր: Նազերը անձամբ պատասխանատու էր վազիր ազամին ներկայացվող վարչական գործողությունների և փաստաթղթերի համար: Նրա հետ ինը քարտուղար էր աշխատում[6]:

Ղուրչի բաշիի պաշտոնը

Ղուրչի բաշու միջոցով էին հավաքվում թիուլներց գանձված գումարները և հանձնվում վազիրե ազամին: Նա ղուրչիների, յուզբաշիների և բանակի բոլոր հարցերի կազմակերպման և նրանց աշխատավարձերի վճարման պատասխանատուն էր[7]: Նրա ենթակայության տակ էին աշխատում **Վազիրե սարքարե ղուրչիբաշին** և **Մոսթուֆիե սարքարե ղուրչիանը**: Նրանք օգնում էին վարչական, գրասենյակային և հաշվապահական հարցերում, կատարում էին հաշվապահի, վերահսկիչի և քարտուղարի աշխատանք, պատրաստում էին հաշվապահական փաստաթղթեր, աշխատավարձերի ցանկեր:

Մողարաբ ալ խաղան դավաթդարե մոհրե անգոշթարե

Աֆթաբ ասարի պաշտոնը

Այս պաշտոնն իրացնողը կանգնում էր ղուրչիների շարքում՝ իրենից ավելի անցյալ ունեցող դավթարդարի կողքին: Նա շահի կնիքի թանաքը պահպանող պաշտոնյան էր:

Ղուլլար աղասիի պաշտոնը

Ղուլլար աղասին[8] ղուլլարների ղեկավարն էր, նրանց թիուլների հաշիվ-

---

[6] **Richard** Raphael du Mans, missionnaire en Perse au XVII e s., Ed : “Francis”, Paris 1995, vol. 2, p. 18, 139, 271.

[7] **Savory Roger M.** History of Shah Abbas the Great, Boulder 1978, vol. 2 p. 258, Ղուրչի բաշի պաշտոնը վազիրե ազամի պաշտոնից հետո իր կարևորությամբ երկրորդ տեղում էր գտնվում: Այն ժամանակ, երբ Իրանում կանոնավոր բանակ չկար, Ղուրչի բաշին համարվում էր պատերազմի նախարար, որին անվանում էին Ամիրալօմարա: Շահ Աբասի գահակալության շրջանում երկրում նոր կարգեր հաստատելու նրա վարած քաղաքականության արդյունքում Ղուրչի բաշու իրավասությունները սահմանափակվեցին:

[8] Chardin, Jean. Voyages, Ed “L. Langlès”, Paris 1811, vol. 5 , p. 302 , Richard ibid, 2, p. 116.

ների ստուգման և աշխատավարձերի վճարման բոլոր հարցերով էր զբաղվում: Նա հսկում էր նրանց եկամուտները, որի համար պատասխանատու էր վազիրե Ազամին[9]: Նրա ենթակայության տակ էին գտնվում **Վազիրե սարքաե զոլամանը**, որն օգնում էր վարչական, գրասենյակային, հաշվապահական հարցերում, կատարում էր վերահսկիչի և քարտուղարի աշխատանք, ինչպես նաև **Մոսթուֆիե սարքարե զոլամանը**, որը կատարում էր հաշվապահի աշխատանք, պատրաստում էր հաշվապահական փաստաթղթեր, աշխատավարձերի ցանկեր:

Իշքի աղասի բաշի պաշտոնը

Իշքի աղասի բաշին կամ արքունիքի արարողապետի աշխատանքը երկու մասից էր բաղկացած. նա պաշտոնական արարողությունների ղեկավարման պատասխանատուն էր, ինչպես նաև բոլոր դռնապանների ղեկավարը: Նրա պաշտոնավարման վայրը Ալի Ղափու պալատի գլխավոր դարպասի մոտ գտնվող սրահում էր, նրա պատասխանատվությունն էր պալատի դարպասի հսկելը և դրա մոտ քնելը, բայց իրականում նա միայն պահակների աշխատանքը հսկելու համար էր այնտեղ այցելում: Նրա պարտականությունների տարածքը գտնվում էր պալատի դռներից դուրս՝ մինչև հարեմի դարպասը, իսկ հարեմից ներս Հարեմի Իշքի աղասի բաշին էր պաշտոնավարում, որի պաշտոնը Իշքի աղասի բաշիի պաշտոնից ավելի ցածր էր համարվում: Իշքի աղասի պաշտոնի առավելությունն այն էր, որ արքունական գանձարան մտնող յուրաքանչյուր նվերից տասը տոկոս ավել գումար էր ստանում, որը ևս ավելանում էր իր եկամուտներին:

Իշիք աղասի հսկողության ներքո էին աշխատում **Իշիք աղասիանե մաջլեսը**, ընդհանուր հանդիպումների ծառայողը, **Ղափուչիները**՝ ղափուչիբաշի դիվանը, և ղափուչիբաշի խալվաթը, որոնք ևս իրենց հերթին մի շարք ենթակա աշխատողներ ունեին: Խոհանոցի աշխատանքի տնօրինումը ղափուչի բաշի դիվանի, իսկ ղափուչի բաշի խալվաթի պարտականությունը շահի առանձնատան աշխատանքների տնօրինումն էր, ինչպես նաև **Մողարաբ ալիազրաթ իշիք աղասի բաշիները**, որոնք հարեմի հսկման պատասխա-

[9] Monshi Eskander Beg “Tarikh-e ‘Alamara-ye Abbasi” Ed: “I. Afshar”, Tehran 1350/1971, vol 2, p. 1106 (պարսկերեն): Ղուլլար բառացի նշանակում էր ծառա, նրանք զինված էին բոլոր այն զենքերով, որ հատուկ էին ղուրչիներին, սակայն ղուլլար անվանումը չէր նշանակում, որ այլ զինվորների համեմատությամբ նրանց ազատությունը սահմանափակված էր: Շահ Աբաս Ա-ն նրանց մեծ ուշադրության էր արժանացնում, և նրանք շահի բանակում կատարում էին այն դերը, ինչ ենիչերիները՝ օսմանյան բանակում:

նատու պահակներն էին և համարվում էին հասարակ պաշտոնյաներ[10]:

Լաշքար նեվիսե դիվանե ալա-ն իշիք աղասի բաշիի աշխատանքային կառույցում վեզիրի և մոսթուֆիի դեր էր կատարում: Լաշքար նեվիսը կառույցի բոլոր անդամների, ինչպես նաև արհեստանոցների աշխատավորներին վերաբերող թվերը ստանում և ամսական նշումներ էր կատարում և դրանք կնքում ու պահպանում էր: Լաշքար նեվիսը ներկայացուցիչ էր ուղարկում այն զորքերի մոտ, որոնք պատերազմի դաշտում էին, և երևի թե դրա համար նրա անունը կապվել է զորքերի հետ և կոչվել է լաշքար նեվիս[11] :

Եասավոլան Սոհբաթիներն ութ-ինն անձ էին, հատուկ առիթների համար նրանք իշիք աղասի բաշիի փոխարեն էին աշխատում, իսկ ընդհանուր հանդիպումներում թագավորի դիմաց էին կանգնում և ենթակա էին իշիք աղասի բաշիներին: Եասա (yasa) բառը մոնղոլական ծագում ունի և նշանակում է օրենք կամ այն անհատը, որի միջոցով իրականացվում էին հրամանները: Եասավոլաները համարվում էին ցածրաստիճան սպաներ, որոնց աշխատանքներից մեկը թագաժառանգների և արքունիքի ու ազնվական երիտասարդների զրուցակիցը լինելն էր: Որպես զինվորական ուսմունքի բաժին նրանք չոգան խաղալ և նկարչություն էին սովորում. դա կապված էր Թահմասբ Շահի այն տեսակետի և մոտեցման հետ, որ արվեստը ճաշակ է ձևավորում:

Ալիջահ թուֆանգչի աղասի պաշտոնը

Նա մինբաշիների (հազարապետ), յուզբաշիների (հարյուրապետ), ղուրչիների (մունետիկ), ոիքաների[12], բոլոր թուֆանգչիների (հրացանավորների) պատասխանատուն էր համարվում և տնօրինում էր նրանց վերաբերող բոլոր հարցերը: Ալիջահ թուֆանգչի աղասիին էին ենթարկվում **Վեզիրե թուֆանգչիաները** և **Մոսթուֆիե սարքարե մազբորները**, որոնք կատարում էին հաշվապահի աշխատանք, պատրաստում էին հաշվապահական փաստաթղթեր, աշխատավարձերի ցանկեր:

Ալիջահ մողարաբ ալ խաղան դիվան բեգի-ի պաշտոնը

---

[10] Savory ibid, vol. 1 p.89-90.

[11] Monshi ibid vol 1, p. 164, լաշքար՝ բառացի, զորք, բանակ:

[12] Ոիքա՝ երիտասարդ տղաներ, որոնք ծառայում էին արքունիքում, նրանք այն զինվորներն էին, որոնք իրենց ձեռքում փայտ էին կրում, որի գլխից բուրդ էր կախված, նրանք նաև կացիններ էին կրում, համարվում էին շահի անձնական պահակները, որոնք երբեմն կատարում էին դահճի պարտականություն: Այն փաստը, որ նրանք կացին էին կրում, կարելի է ենթադրել, որ նրանք էին հենց շահի անձնական սուֆի պահապանները:

Նա դատարանի պատասխանատուն էր: Սադրի հետ միասին վերահսկում էր երկրում կատարված գլխավոր մեղքերը և զբաղվում նրանց քննարկմամբ և սադրի հետ համագործակցաբար վճիռներ էր կայացնում, որոնք անպայման պիտի որոշվեին համաձայն Ղուրանի կանոնների: Դիվան բեգին իսլամական կրոնի ուսմունքի բոլոր պատվիրանները հաշվի էր առնում, նա պատասխանատու էր տրված որոշումների իրականացման համար, որ դրանք իրականացվեին համաձայն կրոնական պատվիրանների: Նա շաբաթվա երկու օրերին իր տանն էր զբաղվում հասարակ ժողովրդի դատական հարցերի քննությամբ: Նա զբաղվում էր չորս գլխավոր մեղքերի (դիպվածների) Էհդաս-ե արբաե՝ սպանության, կանանց պատվազրկման, կուրացման և ատամ կոտրելու քննման և դրանց վերաբերյալ դատական որոշում կայացնելով[13]: Դիվան բեգին նաև երկրի տարածքում գտնվող բողոքների վերահասություն տալու պատասխանատուն էր: Այն գործողությունները, որոնք կատարվում էին դիվան բեգիի կողմից **Մողարաբ ալ խաղան մոնշի ալ մամալեք-ի կողմից** արձանագրվում և կնիքով հաստատվում էին: Մոնշի ալ- մամալեքը սուֆիների և նրանց տրամադրված սիուրղալների հաշվառման պատասխանատուն էր, որի ենթակայության ներքո ութ անձ էր աշխատում: Նրա պարտականություններից էր նաև, որ ուղարկված նամակները և փաստաթղթերը համապատասխան ոսկեջուր կարմիր կնիքով հաստատված լինեին: Նրա աշխատանքը կարևորվում էր արքունիքում[14]:

Դիվան բեգի ենթակայության ներքո էր աշխատում **Դարուղե էսֆահանին**, որի պարտականությունը քաղաքի ներքին և արտաքին անդորրը ապահովելն էր և կարգը խախտողներին պատժելը: Նա իր օգնականների՝ ահդաս կոչվող անձերի հետ, քաղաքի զանազան վայրեր այցելելով, հսկում էր կարգուկանոնը: Նա իր ներկայացուցիչների միջոցով, որոնք սարդասթե էին կոչվում, տեղեկություններ էր ստանում թաղամասերի իրավիճակի մասին: Դարուղեն նաև կատարում էր դատավորի պարտականությունը այն վեճերի համար, որոնց գումարը հինգ թումանից քիչ էր, իսկ մինչև տասներկու և ավելի թումանի հասնող վեճերի համար դիվան բեգին էր վճիռներ կայացնում:

---

[13] Համաձայն Իսքանդար Մունշու վկայության՝ «մուհիդ» կամ «էհդաս» կոչվող տուրք էր գանձվում պետական պաշտոնյաների կամ թիուլդարների կողմից, երբ նրանք զբաղվում էին Էհդաս-ե արբաե կոչվող հանցանքների քննությամբ: Monshi ibid, vol 1 , p. 178

[14] Nasiri, Mohammad Ebrahim b. Zein al-‘Abedin “Dastur-e Shahriyan” Ed: “Mohammad Nader Nasiri Moqaddam” Tehran 1373/1995, pp. 193, 200:

Ալիջահ մողարաբ ալ խաղան, Մաջլես նեվիսե մահֆելե բեհեշեայինի պաշտոնը

Արքունական քարտուղարը, որը նաև կատարում էր պատմագրի աշխատանք: Դա կարևոր պաշտոններից մեկն էր համարվում: Արքունական ընդունելություններում նա նստում էր շահի ձախ կողմում, և որոշ ժամանակ էլ նրան կոչում էին ձախակողմյան վեզիր՝ նրան համեմատելով շահի աջ կողմում, նստող վեզիրի՝ վազիրե ազամի հետ: Նրա պարտականությունները երեք մասից էին բաղկացած, նախ՝ նա կատարում էր քարտուղարի պարտականությունը և պատրաստում արքունական հանդիպումների և ժողովների զեկույցները, նա պարտավոր էր գրի առնել բոլոր զրույցները, ճիշտ այդ պատճառով նրան նաև անվանում էին մաջլես նեվիս[15]:

Նրա երկրորդ պարտականությունը շահի հրամանների, հրովարտակների և որոշումների գրառումն էր, որը պիտի կատարվեր ամենայն ճշգրտությամբ: Վազիրե ազամը և էմիրները պահանջում էին, որ նա իր աշխատանքը կատարեր ամենայն բծախնդրությամբ և դրանք պատրաստեր հայտարարությունների համար[16]: Նա էր շահին փոխանցում հասարակ ժողովրդի մասին տեղեկություններ և հայտնում նրանց ցանկությունները, նա էր ընթերցում էմիրների և այլ վայրերից հղված նամակները, և դրանց պատասխանելու պարտականությունը ևս նրան էր վերապահված: Այդ էր պատճառը , որ նրան կոչում էին ձախակողմյան վեզիր, նա առանց արգելքի ելք ու մուտք էր կատարում թե՛ արքունիք, թե՛ շահի մոտ: Քանի որ նա տեղյակ էր երկրի ներքին խոհանոցին, պայմանագրերին և քաղաքական անցուդարձին, կարևոր դերակատարություն ուներ նաև օտարերկրյա դեսպանների հետ վարած զրույցներում և արտաքին քաղաքականության մշակման մեջ: Նրա երրորդ պարտականությունն այն էր, որ նա արքունիքի արխիվների պատասխանատուն էր: Կնքված պայմանագրերի օրինակները նրա մոտ էին պահվում[17]:

Ալիջահ ամիր շեքար բաշիի պաշտոնը

Նա կարևոր էմիրներից էր, արքունիքից նրան տարեկան տրամադրվում էր մի գումար, որով էլ նա իր հերթին վճարում էր իր ենթակաների աշխատավարձերը: Նրան էր վերապահված շահի որսի կազմակերպման պարտականությունը: Այս պաշտոնի կարևորության ակունքները հասնում էին մինչև թուրքերի և մոնղոլների ժամանակաշրջանից մնացած սովորույթներին, քանի

[15] Մաջլես նեվիս՝ բառացի ժողովի արձանագրությունը պահող կամ քարտուղար:
[16] Chardin, ibid , p. 343-4.
[17] Minorsky, ibid, pp. 96-97.

որ նրանց համար որսով զբաղվելը ոչ միայն ժամանցի միջոց էր, այլև զինվորական վարժանքների կարևոր մասնիկ էր համարվում[18]:

Ալիջահ նազեր[19] բոյութաթիի պաշտոն

Նա արքունական բոլոր արհեստանոցների և պետական կառույցի վերահսկիչն էր, նա էր առաջին վեզիրը, վերահսկիչը արքունական բոլոր եկամուտների ու ծախսերի, ամբողջ շարժական և անշարժ գույքի, պետական գանձարանի պարունակության, ելք ու մուտք կատարող բոլոր իրերի պատասխանատուն: Նա վազիրե ազամի հետ համագործակցաբար հսկում էր ողջ վարչական կառույցը, նա էր շահի շահերի պաշտպանը: Արքունական արհեստանոցները (արքունական խոհանոցը, կարանոցը, ոսկերչանոցը և այլն) նրան էին ենթարկվում[20]: Ալիջահ նազեր բոյութաթի հետ անմիջական կապ ունեին **Բոյութաթե մամուրեի և *Սահեբջամե խազանե ամերե վա բոյութաթե մամուրե-ի* պաշտոնները**: Արքունական արհեստանոցները բոլորն էլ ունեին մի սահեբջամ և մեկ մոշրեֆ: Սահեբջամը վարչական հարցերում բաժնի վերակացուն էր: Մոշրեֆները գնահատում էին իրենց ենթակա արհեստանոցի ծախսերի անհրաժեշտ չափը և պատրաստում էին հաշիվներ: Նրանք ունեին իրենց հաշվապահական տետրերը կատարված ծախսերի համար, այս երևույթն այնքան կարևոր էր, որ եթե նկատվում էր, որ Սահեբջամը չի կարողանում փաստաթուղթ ներկայացնել եղած ծախսերի համար, ուղղակի խնդիրը զեկուցում էր նազերե բոյութաթին: Այս երևույթը խոսում էր այն ճշգրտության մասին, որ տիրում էր Սեֆյան Իրանի վարչական կառույցի մեջ: Արհեստանոցների պատասխանատուները պատրաստ էին աշխատել այն անձնավորությունների հետ, որոնք նշանակվում էին վեզիր ազամի կամ շահի կողմից:

Սահեբջամե խազանե ամերե վա բոյութաթե մամուրեի պարտականությունն էր արքունական արհեստանոցների արտադրանքն ամբողջությամբ գույքագրելը և ներկայացնելը նազերե բոյութաթին, որը ևս, իր հերթին ուսումնասիրելով դրանք, վեզիրե ազամին և վազիրե դիվանե ալիի համար ստացական էր դուրս գրում և հանձնում նրանց և մինչև այն ժամանակ, մինչ այդ

---

[18] **Lockhart L.** The Fall of the Safavid Dynasty, Cambrige, 1958, p. 97.

[19] Նազեր՝ քննիչ, հսկիչ:

[20] Minorsky, ibid, pp 90, 91.

ստացականները վազիրե բոյութաթի և մոսթուֆիե արբաբե թահվիլի կողմից չկնքվեին, նրանց ոչինչ չէր հանձնվում[21]:

Մողարաբ ալ խաղան հաքիմ բաշիի պաշտոնը

Հաքիմ բաշին[22] արքունական բժիշկն էր, որը բոլոր բուժական հարցերի հսկողն էր: Դեղատունը ևս գտնվում էր նրա հսկողության ներքո, քանի որ ուղղակիորեն կապվում էր նրա աշխատանքներին: Նրա կողմից էին նշանակվում բարձրաստիճան պաշտոնյաների, ինչպես սեփահսալարների կամ այլ բարձրաստիճան զինվորականի համար բժիշկ նշանակելու պարտականությունը, նրա ենթակայության տակ վաթսունութ անձ էր աշխատում[23]:

Մողարաբ ալ խաղան Մոնաջեմ բաշիի պաշտոնը

Նա արքունական աստղագուշակն էր, որ ամեն օր պիտի ներկա լիներ արքունիքում, որպեսզի եթե շահը կամ իր մերձավորները ճամփորդելու նպատակ ունենային կամ հագուստ կարել տալու լինեին, նրանց այդ գործերը կատարելու բարեպատեհ ժամը նրանց հաղորդեր: Նա էր նաև հայտնում Արևի և Լուսնի խավարման մասին: Նրա աշխատանքը ինչ-որ կերպ կապված էր հաքիմբաշիի հետ, ասվում էր, որ մինչ շահի համար հաքիմ բաշու նշանակված դեղերի օգտագործելը դեղերի օգտագործման անվտանգությունը պիտի հաստատվեր գուշակի կողմից[24]:

Ալիջահ Ամիր ախոր բաշի ջելոյի և Ալիջահ Ամիր ախոր բաշի սահրա պաշտոնները

Նրանք արքունական ախոռապետերն էին և շահի անձնական ձիապանները, որոնց համար աշխատում էին բազմաթիվ սպասավորներ, ինչպես՝ պայտագործներ, թամբագործներ, շահի թամբի պատասխանատուն և երեսուն այլ սպասավորներ, որոնք քայլում էին շահի ձիու հետևից: **Ալիջահ Ամիր ախոր բաշի սահրան** կատարում էր նույն աշխատանքը, ինչ ամիրախորբաշիջելոն, սակայն պալատից դուրս գտնվող ախոռների համար: Նրա եկամուտը գերազանցում էր ամիր ախոր բաշի ջելոյի եկամուտը[25]:

---

[21] Chardin, ibid , p. 451.

[22] Շահի հիվանդանալու կամ դրա արդյունքում մահանալու դեպքում ամենից շատ նա էր վտանգի ենթակա, որով ոչ միայն նրա պաշտոնն էր վտանգվում՝ ենթարկվելով բանտարկության, պաշտոնազրկման, ունեցվածքի բռնագրավման, այլև որոշ պարագաներում նույնիսկ մահվան էր դատապարտվում:

[23] **Mohammad Dabir-Siāqi**, Tadkerat al-moluk 2nd ed., Tehran, 1368/1989, (պարսկերեն) p. 104.

[24] Nasiri ibid , pp. 114-5.

[25] Minorsky, ibid, p. 94.

Մողարաբ ալ խաղան մոհրալմամալեք-ի պաշտոնը

Նա էր երկրում հատվող բոլոր տեսակի դրամների և այլ թանկարժեք մետաղների որակի ճշտման և հաստատման պատասխանատուն, որը երկրի բոլոր վայրերում իր ներկայացուցիչներն ուներ, սակայն նրա աշխատանքը զանազանվում էր դրամ հատողներից: Մետաղադրամների հատման և պատրաստման պատասխանատուն **Զարաբիբաշիին** էր, նա պիտի հսկեր երկրի բոլոր շրջաններում մետաղադրամների հատման գործընթացը, նրա հրամանով էին պատրաստվում աշրաֆի և արբբասի կոչվող դրամները, որոնց անթերի պատրաստելու պատասխանատուն էր զարաբիբաշին, նա էր ստուգում, որ այդ կապակցությամբ դրամի կշռի և որակի մեջ խարդախություն չկատարվեր, նա պիտի ստուգեր, որպեսզի այլ վայրերում ապօրինի մետաղադրամներ չպատրաստվեին, իսկ օրինախախտները նրա հրամանով պատժվում էին: Զարաբիբաշին ենթարկվում էր մոհրալմամալեքին, որը մետաղադրամների մշակման և հատման զարաբխանեի իսկական պատասխանատուն էր, իրական մոհրալմամալեքը կարող էր այս երկու պաշտոնները միաժամանակ ստանձնել: Զարաբիբաշին նաև պահպանում էր իրեն հանձնված վաջեբին: Սա նշանակում է, որ նա էր գնահատում և որակավորում այն բոլոր գույքերը, որոնք պիտի հանձնվեին գանձարան:

Թազքիրաթ ալ-մուլուքի մեջ մանրամասնորեն նկարագրվել է դրամահատման գործընթացը, որոնք բաղկացած են ինը փուլից, այնտեղ նաև նշվում են գործիքների անունները՝ սաբաքի, ղորս քուբի, ահանգարի, ղաթափ, քոհլեքուի, սեֆիդգարի, թախշ քոնի, սեքե քոնի գործիքներ, ինչպես նաև նշվել է յուրաքանչյուր գործիքի գործառման եղանակը[26]:

Վազիրե սարքաե ենթեղալիի և Վազիրե Սարքարե ֆեյզե Ասարի պաշտոնները

Վազիրե սարքաե ենթեղալիին էր հանձնարարված հողագործության հատկացված հողատարածքների, այգիների, շենքերի, ջրամբարների, ջրմուղների և հողագործական այլ կառույցների աշխատանքների հսկումը, որոնց եկամուտների մեկ չորրորդը նա գանձում էր գյուղացիներից կամ այդ տարածքները վարձակալության վերցրած հողագործներից: **Վազիրե սարքաե ֆեյզե ասար**-ի պարտականությունը հողագործական տարածքների, այգիների, ջրմուղների վերաբերյալ, ենթակա հողագործների կողմից տեղեկությունների արձանագրումը և այդ տարածքների եկամտաբեր լինելու ուղղությամբ աշխատանքների կազմակերպումն էր:

[26] Mohammad ibid, pp. 44, 45.

Մոսթուֆի մողուֆաթե[27] մամալեքե մահրուսեի պաշտոնը

Մոսթուֆի մողուֆաթե մամալեքե մահրուսեն այն վեզիրներն էին, որոնք երկրի երկու տեսակ հողատարածքների՝ խասեի և մամալեքի մեջ գոյություն ունեցող մողուֆաթ տարածքների եկամուտների արձանագրության և վերահասությամբ էին զբաղվում:

Ալիհազրաթ Քալանթարի պաշտոնը

Քալանթարը ճշգրտում էր գյուղապետներին և զանազան համքարությունների կողմից հարկերի և տուրքերի չափը որոշում: Քալանթարի պարտականությունն էր հովանավորել և պաշտպանել գյուղացու շահերը և նրանց վստահված անձն էր:

Ալիհազրաթ Նաղիբի պաշտոնը

Նաղիբի պարտականությունն էր կազմել միասնական տուրքերի ցուցակը (բոնիչե[28]), որը կազմվում էր յուրաքանչյուր համքարության ներկայացուցչի հետ, համաձայն առկա որոշումների, գրի առնվում, կնքվում և հանձնվում էր քալանթարներին, որոնք էլ հանձնում էին յուրաքանչյուր համքարության դիվանին:

Այժմ ամփոփ անդրադառնանք Սահեբջամե փերմինը կրող պաշտոններին: Սահեբջամե խազանեն գանձարանի և նրա բանալիների պատասխանատուն էր, ինչպես նաև գանձարանին պատկանող իրերի և գումարների հավաքագրմանը վերաբերող որոշ գործողություններ կատարող սպասավորը[29]: ***Մողարաբ ալ հազրաթ Սահեբջամե Ղիչաջիխանե Խասեի պաշտոնյան երկու սպասավոր ուներ՝*** **Դար զեքրե աջնասե թահվիլիե սաեբջամե մազքուր**, որը գույքի հանձնման սպասավորն էր, ում հանձնվում էին շահի հագուստները և այն թանկարժեք կտորները, որոնք ընտրվում էին շահի համար հագուստներ կարելու նպատակով, և **Դար զեքրե թավաբեյնե սահեբջամե մազքուրի** սպասավորը, որը արքունիքի մի շարք սպասավորների պատասխանատուն էր, ինչպիսիք էին հագուստ կարող, գուլպա գործող, կանացի չադրա կարող, լանդարե[30] կարող, արդուկ անող, գլխարկ կարող և այլ աշխատողները: ***Մողարաբ ալ հազրաթ Սահեբջամե Ղիչաջիխանե Օմարայիներն*** ավելի էժանագին հագուստներ էին կարում և հիմնականում երեք տեսակ ար-

---

[27] Հոգևոր կենտրոններին նվիրաբերված, կտակված կալվածքներ:

[28] Բոնիչե՝ տուրքերի միասնական ցուցակ:

[29] Mohammad, ibid, p. 28.

[30] Լանդարե՝ անձրևանոցի նման հագուստ, որը պատրաստվում էր կտորի և կաշվի համադրությունից:

տադրություն ունեին՝ վերնաշապիկ, թագեր, գլխի ծածկոցներ և Սեֆյան ժամանակաշրջանում օգտագործվող գլխարկներ: ***Սահեբջամե միվեխանեն*** մրգերի պահոցի և նրան վերաբերող գույքի սպասավորը և պատասխանատուն էր: ***Սահեբջամե Ղանաթն*** անասունների մորթելու և դրանցից մնացած բրդի և այլ մնացուկների հավաքման և օգտագործման աշխատանքի հսկման սպասավորն էր: ***Սահեբջամե աբդարխանեն*** սպասավոր էր, արքունական ապակյա, ոսկյա, արծաթյա սպասքը, ինչպես նաև սառցարանները, սառույց պատրաստելու պահարանները գտնվում էին նրա տրամադրության և պատասխանատվության ներքո: ***Սահեբջամե շոթորխանեն*** սպասավոր էր, որին հանձնվում էին ուղտերը և նրանց պատկանող բոլոր գույքերը. ոտնակապեր, պարաններ, վերմակներ, պայուսակներ: ***Սահեբջամե դահվեխանեն*** սուրճի սպասքի պահպանման և սպասարկման սպասավորն էր, որին էին հանձնում սուրճ, ոսկյա և արծաթյա սրճեփներ, մատուցարան և բաժակներ: **Սահեբջամե Ռեքաբխանեն** սպասավորներ էին, որոնց հանձնվում էին արքունական բաղնիքի պարագաները և գույքերը՝ վերմակներ, բարձիկներ, բազմոցներ, հագուստներ և գորգեր, կոշիկ, գուլպա, ինչպես նաև աղոթքի պարագաներ: **Սահեբջամե մաշալխանե և նաղարեխանեն** սպասավոր էր, որին հանձնվում էին լուսավորության և երաժշտական գործիքներ, ոսկյա և արծաթյա սպասք, ճարպ և այն ամենը, ինչ անհրաժեշտ է լուսավորություն և երաժշտություն ապահովելու համար: **Սահեբջամե անբարին** էին հանձնվում չորքոտանիներին կերակրելու և խնամելու պարագաները, ինչպես օրինակ՝ խոտ, գարի, պայտ, մեխ և այլն: **Սահեբջամե շարբաթխանեին** էին հանձնում որոշ գույքեր՝ ոսկյա, արծաթյա, հախճապակյա, ապակյա, ինչպես նաև շաքար, շաքարավազ, սուրճ, ծխախոտ, նարգիլե, կիտրոնի հյութ, վարդաջուր, մրգահյութեր, թթուներ և այլն[31]:

Սեֆյան Իրանում առկա պաշտոնները և նրանց փոխկապակցվածությունը խոսում են տվյալ ժամանակաշրջանի ուժեղ վարչական համակարգի մասին և պետք է առանձնացնել այն փաստը, որ իշխող կառավարման համակարգը մեծ նշանակություն և ազդեցություն է թողել Իրանի հետագա զարգացման գործընթացում:

[31] Mohammad, ibid, pp. 31-34.

ԱՄՓՈՓՈՒՄ

Սեֆյան Իրանի վարչական և գործադիր կառույցները փոխկապակցված և շատ արդյունավետ գործունեություն են ծավալել: Այս ժամանակաշրջանում գոյություն են ունեցել արքունական բանիմացների խորհուրդ, արքունական վեզիրներ, դատարանների ղեկավարներ և մի շարք այլ պաշտոնյաներ: Սեֆյան Իրանի թե՛ վարչական, թե՛ սոցիալական համակարգերը ձևավորվել են՝ հիմնվելով գոյություն ունեցող վարչակառավարման համակարգի վրա, միաժամանակ նոր շունչ հաղորդելով առկա պաշտոններին, ինչպես նաև վերափոխելով և ստեղծելով նորերը: Տվյալ հոդվածի մեջ անդրադարձել ենք թե՛ պետության գլխավոր պաշտոններին, թե՛ երկրում առկա ամենահասարակ պաշտոններին:

Սեֆյան Իրանում առկա պաշտոնները և նրանց փոխկապակցվածությունը խոսում են տվյալ ժամանակաշրջանի ուժեղ վարչական համակարգի մասին և պետք է առանձնացնել այն փաստը, որ իշխող կառավարման համակարգը մեծ նշանակություն և ազդեցություն է թողել Իրանի հետագա զարգացման գործընթացում:

Բանալի բառեր - վազիրե ազամ (գլխավոր վեզիր), ղուրչի բաշի, ղուլլար աղասի, թուֆանգչի աղասի, դիվան բեգի, Մաջլես նեվիս:

НЕКОТОРЫЕ ЗАМЕТКИ О СИСТЕМЕ АДМИНИСТРАТИВНЫХ ДОЛЖНОСТЕЙ СЕФЕВИДСКОГО ИРАНА

АНАИТ НАЛБАНДЯН

Административные и исполнительные структуры Сефевидского Ирана были взаимосвязаны, и их деятельность являлась эффективной. В данный период существовал придворный совет мудрейших, а также должности придворных везирей, судебных руководителей и ряд других должностей. Развившись на основе уже существующей административно-правительственной структуры, административная и социальная структура Сефевидского Ирана придала новое дыхание уже существующим должностям, реконструировав и создав новые должности. В данной статье мы обратили внимание как на уже существующие государственные должности, так и на самые простые.

Должности, существовавшие в Сефевидском Иране, и их взаимосвязь свидетельствуют о сильной административной структуре в данный период. Следует также особо отметить тот факт, что правящая система управления

имела огромное значение и оказала значительное влияние на дальнейшее развитие Ирана.

Ключевые слова - Вазире аззам (главный везирь), Курчи баши, Куллар агаси, Туфангчи баши, Диван беги, Меджлис невис.

SOME OBSERVATIONS ABOUT THE SYSTEM OF ADMINISTRATIVE POSITIONS IN SAFAVID IRAN

ANAHIT NALBANDYAN

Safavid Iran's administrative and executive branches were interconnected and have realized very efficient activities. In those times there was a court council of wise men, court viziers, court officials and a number of other posts. Both the administrative and social systems of Safavid Iran was developped on the basis of the already existing administrative and executive modals, simultaneously improving and infusing new breath to the old posts and creating new ones as well.

The posts available in Safavid Iran and their interconnection are a proof of the existence of a powerful administrative system in that period. The fact that the then governing administrative system had a considerable significance and influence on the development of todays Iran should be singled out.

Current major governmental posts and the simplest ones are presented in this article.

Key words - Vazir i azam (Grand vizir), Qurchi bashi, Qollar aghasi, Tofangchi aghasi, Divan begi, Majles Nevis.